

ՎԱՋԳԵՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐ ՕՉՆԵՑԻ

Հայոց Եկեղեցու բնմի ասացող և բանի սպասավոր է եղել Հովհաննես Իմաստասեր Օձնեցի:

ԽՈՎԵԼԻ Հայրապետի միայն մահվան թիվն է հայտնի՝ 728 թ., այսինքն՝ ևս մեկ տարի, և կլրանա մի ցոր տարեկից՝ Իմաստասեր Կաթողիկոսի 1270-ամյա տարեկիցը: Հայտնի է նաև, որ Հովհաննես Օձնեցին եղել է մեր Եկեղեցու Հայրապետը 717-728 թթ., այսինքն՝ այս տարի իր լրմանն է հասնում մեկ այլ տարեդարձ. Հայոց Եկեղեցին, իրավամբ, կհիշի սուրբ Կաթողիկոսի 1280-ամյա այդ տարեդարձը:

Հովհաննես Օձնեցին Հայ Եկեղեցու այն Հայրապետներից է, ովքեր մեզ են ավանդել իմաստասիրական, եկեղեցական հարուստ ժառանգություն: Այդ ժառանգությունը հայ ստովածաբանական, դավանաբանական գրականության մի ամկապուղի մասն է:

Օձնեցու հայացքների շատ գծեր ու ընթացություններ ծրարված են նրա լեզվական ամհատական ոճի մեջ: Առանց պարզաբանելու այդ ոճի գաղտնիքները, շատ բաներ կարող են ամիմանալի մնալ, ամհասու դառնալ: Սա այն լավագույն դեպքերից մեկն է, երբ լեզուն իր մեջ է առնում այն կրոնի մտավոր ինքնատիպությունը, իմացական ողջ կարողությունը, ընդգրկում է այդ լեզվով գրողի այն ընկալումները, որոնցով գնահատվել է իր ժամանակը, կանխագծվել գալիք ժամանակը՝ կապված Հայ Եկեղեցու ապագայի, նրա հավատավոր ժողովրդի հետ:

Հովհաննես Օձնեցին, ապրելով և գործելով 8-րդ դարում, իր երկերը գրել է ժամանակի գրական հայերենով: Այն մեր ոսկեդարին լեզուն է, սակայն հետգիտել գրաբար (գրոց լեզու) դարձած: Այդուհանդերձ Օձնեցու երկերում, այսինքն՝ մեծ ճառասացի գրավոր խոսքում այդ գրաբարը դեռևս պահում է իր ողջ կանոնակառուցությունը, դասական լեզու կոչվելու փայլն ու հզորությունը: Ամցյալ դարի հայ բանասերներից կուզեմայից շեշտել հատկապես մի քանիսի գնահատությունը՝ ուղղված Իմաստասերի ոչ միայն լեզվին, այլև մտածողությամբ՝ առհասարակ: Օրինակ՝ «Նոր հայկազյան բառգիրքը» (այսուհետև՝ ՆՀԲ, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837) կազմողները Հովհաննես Օձնեցուն բնորոշում են իբրև «վսեմ և գերապանծ հայկաբանությամբ» գրող հեղինակ, ում խիստ հատկանշական է եղել նաև ժամանակի՝ իր դարի «հեղինակական բանահյուսությունը» (իմա՝ հունարան ոճով բառակերտումը-Վ. Հ.), ում ճառերը փայլում են «հզոր և ազդու ոճով»: Նման բնորոշումների կարելի է համընդհանուր շատերի մոտ, երբ առիթ է եղել խոսելու ներհում աստվածաբանի և բանիբուն իմաստասերի լեզվական մշակույթի, իմացաբանական ընդգրկումի մասին:

Հայտնի է, որ Հովհաննես Օձնեցին հեղինակ է զգալի թվով՝ աշխատությունների, որոնք ըստ թեմայի, հեղինակի հետապնդած մպատակի, հասցեագրված բաժանվում են մի քանի խմբի: Ըստ այդմ՝ մի կողմից առանձնանում է «Ատենաբանություն»-ը, մյուս կողմից՝ «Մառ ընդդէմ պաղիկեանց» և «Մառ ընդդէմ երևութականաց» գործերը, մեկ այլ կողմից՝ Եկեղեցու կանոնակարգին վերաբերող երկերը, քոլորովին այլ կողմից՝ ծիսական բնույթի գրվածքները, նաև

շարականները և այլն: Այդ երկերը մեզ են հասել ձեռագիր, հետագայում տպագրվել են ընդհանուր խորագրով՝ «Մատենագրութիւնք» (Վենետիկ, 1833, այլև՝ 1953): Դրանցից մեկ-երկուսը տպագրվել են առանձին՝ «Ընդդէմ երևութակամաց» (Վենետիկ, 1807), «Խոստովանութիւմ ամշարժ յուսոյ» (Վաղարշապատ, 1896) և այլն: Օձնեցիմ կազմել է «Կանոնագիրք Հայոց»-ը (Թիֆլիս, 1914):

Առ այսօր, բացի «Մատ ընդդէմ պառիկեանց»-ից, չունենք Օձնեցու երկերի աշխարհաբար թարգմանությունը: Իսկ այլ լեզվով, օրինակ, ունենք: Օձնեցու կարևորագույն երկերն անցյալ դարի կեսերիմ թարգմանվել են լատիներեն, տպագրվել ոչ միայն մեկ ամբողջության մեջ (Վենետիկ, 1834), այլև դրանցից մեկը՝ «Ընդդէմ երևութակամաց»-ը, առանձին (Վենետիկ, 1818): Ընդ որում լատիներեն թարգմանությունները զուգադիր տպագրված են հայերեն (գրաբար) բնօրինակների հետ: Այս գործում ամուրամայի ավանդ ունի Մկրտիչ Ավգերյանը: Նա թարգմանությունները, հատկապես «Ընդդէմ երևութակամաց»-ը տպագրելիս բնագրերը պատրաստել է առաջաբաններով, բանասիրական մեկնաբանություններով և ծանոթագրություններով:

Հովհաննես Օձնեցու երկերի նոր գրական հայերեն թարգմանությունը խիստ ամհրածեշտ է մեր օրերում: Նկատի ունենք այդ երկերի թե՛ իմաստասիրական, աստվածաբանական ճշմարտացիությունը և թե՛ հայոց մեջ բուն առաքելական հավատքից կատարվող շեղումները, որոնք երևան էին եկել այն ժամանակներում, և այսօր դրանց իմացությունն ու զգուշանալու նպատակով նկատի ունենալը միանգամայն արդիական են:

Իսկ ի՞նչն է պատճառը (եթե այնուամենայնիվ ուզեմանք որևէ պատճառ փնտրել), որ դեռևս չունենք մեծ իմաստասերի երկերի աշխարհաբար թարգմանությունը: Կարծում ենք, որ ամենահիմնական պատճառը նրա երկերի իմացաբանության, մանավանդ լեզվի և հեղինակային ոճի մեջ պետք է փնտրել: Օձնեցիմ իր աշխատությունները գրել է ժամանակի գրական հայերենով, իսկ վերջինս գործառական ոճի տեսակետից սերտորեն առնչվում է 5-րդ դ. երկրորդ կեսին մեզանում երևան եկած հումարան դպրոցի մերկայացուցիչների մշակած լեզվին: Այդ առնչությունը նկատելի է նրա լեզվական մտածողության, հատկապես տերմինաբանության մեջ:

5-րդ դարում, ի թիվս մշակութային մշանակալից այլ ձեռնարկումների, մեզանում բուն վերելք է ապրում թարգմանական գրականությունը: Դարի 2-րդ կեսին, կապված հումարեցից կատարվող թարգմանությունների լեզվական և ոճական առանձնահատկությունների հետ, ձևավորվում և առաջ է գնում թարգմանական մի դպրոց, որի մերկայացուցիչները հումական մշակութային կենտրոններում ստացել էին ամենաբարձր կրթությունը: Ահա այդ մերկայացուցիչներն են, որ հումարեցից հայերեն թարգմանելիս խստորեն հետևում էին հումարեն լեզվի մտածողությանն ու ոճին՝ կուտակելով որոշակի ավանդույթ և ստեղծելով թարգմանական առանձին ուղղություն: Բանասիրության մեջ դա կոչում ենք հումարան դպրոց, իսկ այն լեզուն, որ ինչ-ինչ առանձնահատկություններով կաղապար ուներ հումարենն ու նրա գործառական ոճերը, հումարան հայերեն: Վերջինս գրաբարի մեջ գործածվում է ոչ միայն հիշյալ ժամանակում, այլև շարունակվում է հետագա դարերում: Եվ այդ դպրոցի մերկայացուցիչներն իրենց իսկ ստեղծած հումարան հայերենը գործածում են ման ինքնուրույն աշխատություններ գրելիս: Հումարան հայերենն ամեն ինչից զատ գիտական լեզու էր՝ իր որոշակի քառակազմությամբ, իմաստաբանությամբ, գիտաճյուղային անվանումներով՝ տերմինաբանությամբ:

Հովհաննես Օձնեցիմ, իրև ժամանակի բարձր կրթության հասած մտավորական, իրև իմաստասեր աստվածաբան, հաստ էր ողջ հայերեն գրավոր մշակույթի, մեզանում երևան եկած գիտական ձեռքբերումների: Եր կարդում եմք նրա աշխատությունները և մամրագնի տեղեկանում նրա լեզվական մտածողությանը, ապա չեմք կարող չկարծել, որ հայոց ամենամեծի աշխատասեր եկեղեցականը մասնակի տիրապետելիս է եղել կարևորագույն լեզուների, կարծում եմք, որ նա չէր կարող հմուտ չլինել հունարենի մեջ, որովհետև գրավոր խոսքում գործածում է այնպիսի հունարան ոճեր ու արտահայտություններ, որոնք ոչ թե մախկիմ ավանդույթի հետևելու, այլ լեզվի լիովին տիրապետելու ապացույց են:

Օձնեցու երկերը գրված են իմաստասիրական խորությամբ: Նա իր հայացքներով հարում է իմաստասիրական որոշակի ուղղության, Արիստոտելի հայացքների հետևորդ է իմացության և գոյաբանության հարցերում: Գոյի մեկնաբանման հարցերում Օձնեցիմ, այնուամենայնիվ, ճիշտ է համարում գաղափարից դեպի իրմ ընթացող իմացության ճանապարհը: Բառմ, իրև ամվանում, պայմանականորեն է կապվում իրի հետ, նրանց միջև կապը պայմանական է, այսինքն՝ պատահական: Ուստի այդ երկերը թարգմանելիս ամենայն ճշգրտությամբ պետք է հետևել իմացաբանական այդ կողմին, ամխաթար դարձնել վերջինիս վերարտադրումը:

Եթե մինչև այժմ չունեմք Օձնեցու երկերի աշխարհաբար թարգմանությունը, ապա դրանում ինչ-որ չափով կաշկանդիչ է եղել լեզուն: Բավական դժվար է ըստ ամենայնի հաստ լինել Օձնեցու գիտական լեզվին: Սա այն դեպքն է, երբ ենթադրվում է ոչ միայն հայոց լեզվի պատմության խորն իմացություն, այլև հայերենում երևան եկած հունարան դպրոցի լեզվաշինական գործունեության մասին հստակ պատկերացում: Թարգմանել փորձողն անընդհատ քախվելու է լեզվական փաստերի հետ, որոնք նոր գրական հայերենով չեն վերարտադրվի, եթե ի գործ չդրվեն հիշածս խորն իմացությունը և հստակ պատկերացումը: Ըստ այդմ՝ Օձնեցու երկերի աշխարհաբար թարգմանության մախապայման եմք համարում թե՛ աստվածաբանական, իմաստասիրական ուղղվածությանն իրազեկ լինելը, թե՛ հայերենի, մանավանդ գրաբարի իմացությունը և թե՛ հունարենի ու հայ հունարան դպրոցի մասին որոշակի գաղափար ունենալը:

Արդեն ասել եմք, որ անցյալ դարում Վենետիկի Մխիթարյան դպրոցը, համձիմ ԼՄրտիչ Ավգերյանի, ձեռնամուխ է եղել Օձնեցու երկերի լատիներեն թարգմանությանը՝ նպատակ ունենալով ավելի լայն ճանաչողության արժանացնել դրանք: Լատիներեն թարգմանությունները մեծապես կարող են օժանդակել այն գործին, որը կատարվելու է նոր հայերեն թարգմանության նպատակով: Ավգերյանն իր գրչակիցներին յուրահատուկ երանությամբ գյուխ է բերել Օձնեցու երկերի այդ թարգմանությունը: Նա բանասեր թարգմանիչ է եղել, բնագրերի շատ տեղիների համար մեկնաբանումներ ու կարծիք հայտնել, յստորեն հետամուտ եղել իմաստասերի լեզվական ոճին ու մտածողությանը, օգտագործել իր ձեռքին եղած ձեռագրերի տարբեր կարգի տվյալներ: Այդ ամենն այսօր պիտի հաշվի առնվի նոր գրական հայերեն թարգմանության մեջ: Ըստ այդմ էլ՝ մի կողմից անհրաժեշտ է կողմնորոշվել մխիթարյանների մեկնաբանությունների մեջ, նրանց կարծիքին քախվելիս, մյուս կողմից՝ լատիներենի այս կամ այն չափով իմացությունը մեծապես կօգնի այդ թարգմանություններն օգտագործելուն:

Առանց վերը հիշված հանգամանքները հաշվի առնելու, կարծում ենք, գրեթե անհնարին է լինելու Հովհաննես Օձնեցու աշխատությունների մոթարգամությունը:

Նկատի ունենալով այդ հանգամանքները՝ ստորև անդրադառնում ենք Օձնեցու «Ընդդեմ երևութականաց» աշխատությանը: Փորձելու ենք ավելի շուտ բանասիրական, քան գուտ լեզվագիտական կամ ոճաբանական հայեցակետից վերլուծելու այդ աշխատությունը: Դա ամֆրածեշտ է, որովհետև Օձնեցու գաղափարներն ու հայացքները ժամանակին զգալի դեր են խաղացել Հայ Եկեղեցու ապագայի համար: Դրանք խիստ համահունչ են մեր օրերին, արդիական՝ մասեր օրերում: Այնուհետև, լեզվական և ոճական առանձնահատկությունների վերհանումով կարելի է մպատել այն գործին, որն ապագայում ձեռնարկվելու է մրա երկերը թարգմանելու մպատակով:

«Ընդդեմ երևութականաց»-ը Օձնեցին գրել է դավամարանական պայքարում Հայ Եկեղեցու ճշմարիտ ուղղությունը և միասնությունը պաշտպանելու մպատակով: Այն ուղղված է այն մտածողության դեմ, որ Քրիստոս ճշմարիտ մարդեղությունն ընդունում է ոչ թե իրապես, այլ երևութապես, և այդ մտածողությունն ունեցողները կոչվում են երևութականներ: Նման սխալականությունն ապացուցելու և մերժելու համար Օձնեցին օգտագործում է մի շարք փաստեր՝ քաղված ոչ միայն Եկեղեցու սուրբ Հայրերի, այլև հակառակ կողմում գտնվողների երկերից: Այստեղ ծառանում է օգտագործված աղբյուրների հարցը: Ի՞նչ աղբյուրներ են դրանք և ինչքանով են օգտագործված Օձնեցու երկում: Ասենք, որ Օձնեցին ձեռքի տակ ունեցել է այնպիսի տվյալներ, որոնց այսօր մեզ հայտնի են: Կամ մակ այնպիսիները, որոնք բանասիրական ճշգրտում, որոնում և հավաստիություն են պահանջում:

Հետաքրքիր է այն, որ Օձնեցու օգտագործած և մեզ այսօր հայտնի գրավոր աղբյուրները մերկայացնում են ինչ-ինչ տարբերություններ: Վերջիններս բացատրվում են հետագա գրչագրական փոփոխումներով: Կարելի է մտածել, որ Օձնեցին, ժամանակով մոտ կանգնած լինելով այդ աղբյուրներին, ավելի հարազատ ձևով է դրանք օգտագործում: Այսպես, Օձնեցին իր այս երկում մեքքերում է անում Գրիգոր Լուսավորչից մի հատված՝ քաղված Ագաթանգեղոսից, որտեղ կան բառեր և արտահայտություններ, որոնք վերջինիս հետագա հրատարակություններում բացակայում են: Օրինակ՝ «Առաքեցա Աստուած յԱստուծոյ, և առ հոգի և մարմին ի կուսէ» (Վեմ., 1954, էջ 62-63)-«Առաքեցա Աստուած յԱստուծոյ սուրբ Որդի, առ զմարմին ի կուսէ» (Ռ. տ., էջ 473): Նկատելի է ոչ միայն բացթողում, այլև հավելում: Այս փաստին ժամանակին ուշադրություն է դարձրել Մկ. Ավգերյանը: Այնուհետև՝ «Որպէս և ինքս իսկ ասաց. «Ես նոյն եմ՝ և ոչ փոփոխիմ» (Վեմ., 1953, էջ 64)-«Որպէս և ինքս ասէ. «Ես նոյն եմ՝ և ոչ փոփոխեցայ» (Ռ. ֆիլիս., 1909, էջ 189):

«Ընդդեմ երևութականաց»-ի տարբեր հրատարակություններում երբեմն մկատվում են բնագրի բացթողումներ: Այսպես, հետևյալ հատվածը չենք գտնում Վեմ., 1893 և 1953 թթ. տպագրություններում, թեև կա Վեմ. 1807, այլև՝ լատիներեն գուգադիր (Վեմ. 1818 և 1834 թթ.) տպագրությունների մեջ. «...բարձեք ընդ միմ և զմա՝ գորմէ ասեսս. և հարկ է կամ ստութեամ և կամ այլոյ ասել գոյացութեամ գիրմ: Եւ զիա՞րդ մարդ, և որդի մարդոյ, և անդրամիկ ի մէջ եղբարք բազմաց. և ամենայնի մմամ մեզ՝ բաց ի մեղաց: Կամին ծանօթանալ պտղւմ, «չորիւք այսորիւք անստերիւրօղ խորհրդով առ հմտութիւն իրիմ...»: Այնուհետև, ՆՀԲ-ում (Ռ. 2, Վեմ., 1837, էջ 807) վերածգել բառահողվածի տակ հղում կա Օձնեցու

Ռիշյալ հատվածին, որտեղ բերված է վերջինիս չորիս այսոքիս անստերիոր խորհրդով առ հմտությամբ իրիմ *վերածգեսայ ածցիս*» մասը: Նման դեպքերում կարևոր է ձկատի առնել հեղինակի բնագրի բոլոր տպագրությունները, ավելի՛մ դրանց համեմատությունը մեզ հասած ձեռագրերի հետ: Այս տեսակետից ևս Հովհաննես Օձնեցու երկերը պահանջում են որոշակի բանասիրական և բնագրագիտական աշխատանք:

Այնուհետև, «Ընդդեմ երևութականաց»-ը աստվածաբանական աշխատություն է, որ ներկայացնում է իմացաբանական որոշակի համակարգ: Նրանում երևան են եկել այնպիսի հասկացություններ և ճանակող բառեր՝ տերմիններ և գիտական անվանումներ, որոնք այսօր պետք է հաշվի առնվեն պատմականորեն: Այս տեսակետից բավականին հետաքրքիր են Օձնեցու գործածած շատ հասկացությունների անվանումները: Եթե դրանց վերահասու չլինեիրք ճիշտ թարգմանելիս, ապա շատ դեպքերում կարող է տեղի ունենալ հեղինակի ըմբռնումների խաթարում, Ռիշյալ ճիշտ համակարգի անճիշտ մեկնաբանում: Օրինակ՝ Օձնեցիմ օգտագործում է *դէմ* բառը, որը պիտի թարգմանվի *անձ* բառով՝ ի հակադրություն *անձն* բառի, որ նշանակում է *հոգի*՝ ելնելով դրանց իմացաբանական նշանակությունից, իբրև համարժեք հում. *προζωπον*, լատ. *persona*, այլև՝ հում. *ψυχη* կամ *πνεύμα*, լատ. *anima*. «Իսկ ի գերազանց և ի սքանչելի միատրությունե՞նէ ոչ ինչ է արգել միութեամբ՝ զամենայնս խոստովանել ի Քրիստոս, մի *դէմ*, մի *անձն* և մի նոր բնութիւն» (վեմ., 1959, էջ 64): Ըստ այսմ պիտի թարգմանել հեղինակի կիրառած *անձնանայ* «հոգի առնել, գոյավորվել», *անձնաւոր* «հոգի ունեցող», *անձնատրական* «գոյացական», *միանձնականութիւն* «միասնական հոգի» և այլ բառերը, որոնք իմացաբանական մույմ հիմքով են պայմանավորված: Այդ և այդ կարգի շատ բառեր ու տերմիններ, երբ համեմատում ենք «Նոր հայկազյան բառարանի» տվյալները, Օձնեցու կերտած այն բառերից են, որոնք կազմված են հունարենի բառակազմության հետևողությամբ, սակայն հայերենի միջոցներով:

Մյուս կարևոր հանգամանքը, որը սերտորեն առնչվում է վերը նշվածին, Օձնեցու երկում տեղ գտած նորակազմություններին է վերաբերում: Մեծ իմաստասերը գործածում է բառեր ու տերմիններ, որոնք ոչ միայն նախկինում հայտնի էին, այլև նորություն են: Եվ դա քննական է, որովհետև ամեն մի իմացություն, երբ հիմնված է լինում ստեղծված ավանդույթի վրա և ճանապարհ է քայլում դեպի հետագան, չի կարող աչքի չընկնել իր լեզվական նորությամբ ու թարմությամբ: Վերջին հատկանիշներն են, որ եմթադրում են նոր գաղափարի և հայացքի մույմարժեք ձևակերպում համապատասխան բառերով, գիտական անվանումներով և արտահայտություններով: Վերջիններս Օձնեցու երկում ձևակերպվում են հմտորեն, ընդհանուր համակարգի մեջ: Ըստ այդմ՝ զգալի տեղ են գտնում նորակազմ բառերը: Դրանք բավական շատ են՝ սկսած *երևութականից* մինչև *աննեղագոյն*, *անմարմնաբար*, *անչարաբարոյական*, *անպատկառացոյց* («անատոք»), *անտարակարծ*, *անստերիորող* («ամխտոր»), *առանձնաւորիմ*, *առաւելաշնորհ*, *ապարանություն*, *թերաբանել*, *խանձարրապատեմ*, *կաթնաբոյծ լինել* («կաթնակեր լինել»), *կորաշաւիղ*, *կիսաբաժ*, *մարմնաձեւապէս*, *չարապաշտութիւն*, *չարաբարձումն*, *հոգևորութիւն*, *որոմնացանու* («չարի սերմ ցանող»), *ուղղասացութիւն*, *ներլինելութիւն* («լինելություն»), *խրաւացուցանեմ* («ճշմարտել») և այլն: Դատելով ՆՀԲ-ի տվյալներով՝ մեզմ նորակազմությունների թիվը միայն այս երկում հասնում է տասնյակների, որ վկայում է հեղինակի բառակերտման միտումը՝ նոր հասկացություններ նշանակելու նպատակով:

Քիչ չեմ նաև այն քառերը, որոնք գրաբարի հիշյալ քառարանում վկայակոչվում են մախ ՕՃՆԵՂԻ, այնուհետև՝ հետագա հեղինակների անունով: Օրինակ՝ ՆՋԲ-ում նշվում է, որ *կեղակարծ* քառը մախ գործածել է ՕՃՆԵԿԻՄ, հետագայում՝ ուրիշ հեղինակներ. «Զարմաման ընդ այսպիսի *կեղակարծ* և գայթ ի գայթ խոստովանութիւն» (էջ 62): Նման քառերը ՕՃՆԵՂԻ երկում բավականին շատ են՝ *ամբաստանական, թերարամել, գեղեցկակերտեմ, խելայեղ, կիսարած* («կիսով չափ»), *մերհականայ* («մերհակ է, հակառակ է»)՝ իրրև միադիմի բայ), *մոյնածեարար* և այլն: Այստեղ հետաքրքիր է այն, որ ՕՃՆԵԿԻՄ երբեմն օգտագործում է իր ուսուցչի՝ Թեոդորոս Բոթեմավորի կազմած քառերը (օրինակ՝ *ամպարիմանայի*), ինչպես նաև իրենից առաջ գործածված այս կամ այն բառի փոխարեն ինքն է կազմում մորը (օրինակ՝ *փոխարուսանիմ* քառը «վերածել» իմաստով ՕՃՆԵԿԻՄ գործածում է ժամանակին Ստեփանոս Սյունեցու օգտագործած *փոխադրեմ, փոխարկեմ* բառերի դիմաց): Դժվար չէ նկատել, որ քառերի մեծ գործածությունը, իրրև ուրույմ հասկացության, գաղափարի կրող կամ արտացոլում, ունի ոչ միայն իր ավանդույթը, այլև հետագա ընդունելությունը՝ թե՛ իմացաբանական և թե՛ մշակութային-հոգևոր առումով:

Այս վերջին առումով բավական հետաքրքիր է նախկինում գործածված բառի մոր իմաստային կիրառությունը: Այս դեպքում ՕՃՆԵՂԻ թե՛ «Ընդդէմ երևութականաց»-ը և թե՛ առհասարակ մյուս գործերն անմեծ փաստեր են տրամադրել գրաբարի քառարաններին: Բառի, տերմինի մոր իմաստով կիրառվելը վկայություն է թե՛ հեղինակի ընդհանուր լեզվաիմացության և թե՛ այն բանի, թե մա ինչ հայացքների և գաղափարների շարունակող է գարգացման մոր պայմաններում: Հայ Առաքելական Եկեղեցու մեծագույն պաշտպան և նրա հավատքի պայծառ մունետիկ Հովհաննես ՕՃՆԵԿԻՄ իր այս երկում բազմիցս գործածում է ավանդաբար պահպանված բառեր ու տերմիններ՝ դրանց մեջ դնելով իր ժամանակի ըմբռնումները: Այսպես են գործածվում, օրինակ, *երկմել* («խորհել»), *ջախըպխ* («կցկտուր, փուտ, ամպիտան»), *ամզո* («ունայն, դատարկ»), *շարադրութիւն* («խոսք»), *աղամողիմ* («խոտորվել, մոլորվել, տատանվել»), *խոհականութիւն* («միտք, իմաստ»), *հոգևորութիւն* («բանական հոգի առնելը, հոգիանալը»), *արտորոշել* («զանազանել, որոշել»), *առասպելական* («աղճատված, քանդագուշական»), *սպականութիւն* («անցում գոյությունից չգոյության, հակառակ ծնունդի կամ լինելության»), *քաղկանայ* («կայանայ, հաստատվել»), *տրամադրութիւն* («հակվածություն»), *իրաւացուցանեմ* («ստուգել, ճշմարտել, հավաստի դարձնել») և այլն:

Բառերի, իրրև հասկացության կրողի և լեզվի պատմության գոյացման լավագույն միջոցի, գործածության առումով նկատելի է նաև այն, որ դրանք ոչ միշտ են քառարաններում արծաճագրվում՝ իրրև լեզվի որոշակի շրջանի փաստ: Այսպես, ՕՃՆԵԿԻՄ իր այս երկում օգտագործում է *դողակատել* («խուսափել, պառակտել») քառը (*դողակ* «լողակ, լող տալով ազատվող» և *ատել* «բաժանել, կիսել»), որը չեմք գտնում ՆՋԲ-ում (հ. 2, էջ 164): Ընդհատ է, այդ քառը գործածվել է հայ հիմ գրականության մեջ, հասել մինչև մոր գրական հայերենի փուլը (նկատի ունենք, օրինակ, Ստ. Մալխասյանցի «Հայերեն քաղատրական քառարանում» լինելը), սակայն սկզբնաղբյուրը մնում է չնշանակված. հնարավոր է, որ քառը գործածվել է մինչև ՕՃՆԵԿԻՄ: Այդուհանդերձ, դողակատել բառի գործածության ժամանակը ճշգրտվում է «Ընդդէմ երևութականաց»-ի հիման վրա այնքան ժամանակ, քանի դեռ այլ, ավելի հիմ աղբյուրներում նրա հնարավոր գործածությունը չի պարզվել: Այսպես նաև լեզական այլ ձևերի դեպքում: Օրինակ, ՕՃՆԵԿԻՄ «Ընդդէմ երևութականաց»-ում գործածում է *էս*

դերանվան մի ձև՝ *ի մեզից*, որ արտասովոր է հիմ գրական հայերեմի համար. «Եւ կամ գորս *ի մեզից*, աստի Հոգիմ սուրբ գարթոյց՝ լինել զԿՍի առաջնոյն լուսաւորիչ» (էջ 81)- «Եվ կամ որ *մեզամից* այս Ասորբ Հոգիմ արթմացրեց՝ լինելու լուսավորիչ առաջիմի հետևից»։ Այստեղ մնամ ձևի գործածումը մպատակ ունի արտահայտելու «մեր միջից» կամ «մեզամից» իմաստը՝ իբրև մասնավորեցում, որ առնվում է ընդհանուրից, ամբողջից։ ՆՆԲ-ում (Ռ. 2, էջ 259, 1-ի սյունակ) հատուկ մշտն կա դրա մասին՝ այն բերելով իբրև առանձին բառահոլոված։ Ըստ այդմ՝ որ *ի մեզից*-ը մշտնակամ է «որոնք մեր միջից են»։ ուստի թարգմանել կարելի է *մեզամից* բառով, որ պարունակում է հիշյալ մշտնակությունը։ Նման ձև կիրառում է միայն Օձնեցիմ։

Խոսելով Հովհաննես Օձնեցու կերտած մոր բառերի և տերմինների մասին՝ վերը մշեցիմը, որ դրանք հաճախ կազմվում են հումարեմի հետևողությամբ։ Այստեղ հարկ ենք համարում ավելացնելու, որ ըստ այդմ ունեմում ենք հայերեմ այնպիսի մոր բառեր և տերմիններ, որոնք լեզվագիտական տերմինաբանությամբ ասած՝ պատճենումներ են։ Եվ հեղինակն այդ բնագավառում մերթդրել է որոշակի ջանքեր. փոխանակ այս կամ այն բառն ինքնաբերաբար օտար լեզվից վերցնելու և իբրև փոխառյալ բառ գործածելու, ինքն է հմտորեմ կերտում մնամ բառերի հայերեմ համարժեքները։ «Ընդդէմ երևութակամաց»-ում զգալի թիվ են կազմում մնամ բառերը, և դրանք բառակազմական կաղապարները հիշեցնում են հումարեմի մեջ եղած այս կամ այն բառը և տերմինը։ Այդ մտնեցումը գալիս է ընդհանուր հասկացության ամբողջական, ավելին՝ մույնական ձևով անվանելու ձգտումից։ Այսպես, Օձնեցիմ գործածում է *մերիմեղություն* բառը, որն ունի մույն իմաստը, ինչ հայերեմ *իմեղություն* («լիմեր, ծնունդ») բառը։ Վերջինս Օձնեցու մորակերտ բառերից է՝ հումարեմի հետևողությամբ *մեր* մախաճամցի հավելումով, որն իհարկե որոշակի հասկացական երամգավորում է տալիս բառիմաստին։ Ըստ ՆՆԲ-ի՝ *մերիմեղություն* բառը գործածում է միայն Օձնեցիմ՝ իր այս երկում. «Քամզի ապականություն մերիմեղութեամ մերհակամայ, և մերհակքմ ոչ կարեն համագամայն ի միում և ի մոյն ժամանակի բաղկամայ» (էջ 82)- «Տրովհետև ապականությունը *իմեղությանմ* է հակառակ, իսկ մրամք, որ հակառակ են, չեն կարող միամզամից մեկում կամ մույն ժամանակում հաստատվել»։

Այնուհետև «Ընդդէմ երևութակամաց»-ում մկանելի է հումարեմիմ հետևելու մեկ այլ իրողություն։ Դա տեղի է ունեմում մեկ այլ պարագայում, այսինքն՝ խոսքի կամ մախադասության մակարդակում։ Նկատի ունեմք ոճաբանական այն երևյալները, որոնք դեռևս 5-րդ դարում հումարեմից կատարված թարգմանություններում զգալի տեղ ունեին։ Այն հումարեմ հայերեմից եկող ազդեցություն է, և Օձնեցիմ հաճախ է դիմում մնամ երևյալների օգտագործմանը։ Այս երկում դրանք քավական ցայտում ձևով են դրսևորվում, և մոր գրական հայերեմ թարգմանության մեջ այն պիտի՝ լիովին հաշվի առնվի։

Դրանցից ամիրածեշտ ենք համարում մշել հետևյալները։

Հումարեմում տարածված երևյալ է մախադասությունը կառուցել ոչ թե ուղղական հոլովով դրված ենթակայով և դիմավոր բայով արտահայտված ստորոգյալով, այլ այնպիսի բառակապակցությամբ, որի մեջ ենթական դրվում է տրական հոլովով, իսկ ստորոգյալը՝ ամորոշ դերբայով։ Հումարեմ դպրոցի կատարած հայերեմ թարգմանություններում, ինչպես մաև այդ ոճին հետևող հեղինակների ինքնուրույն երկերում այդ երևյալը մույնպես տարածված էր. գրաբարում դա կոչվում էր տրական հոլովը ամորոշ դերբայի հետ (*dativus cum infinitivo*) կապակցություն։ Օձնեցու երկերում ևս, հատկապես «Ընդդէմ երևութակամաց»-ի մեջ, զգալի չափով գործածվում են կապակցությունները։

Օրինակ՝ «Յոյժ տեմչալի էր իձն և փափագելի ոչ այլոց գիս, և ոչ գայլս իձն լինելի թշմամութեան» (էջ 65) – «Օտառ էի ուզում և փափագում, որ ուրիշներն իձն և ես ուրիշների հետ թշմամութեամբ մեջ չլինեին»։ «Ահաւասիկ յայտնի բաձի երևեցոյց սուրբ հայրս՝ ոչ մասուս գոյ մեղաց և ապականութեան, որ ի մեզ գտանիմ կիրքս» (էջ 88) – «Ահա սուրբ հայրը հայտնի խոսքով ցոյց տվեց, թե մեղքերը և ապականությունը մաս չունեն»։ Այս մախադասությունների ընդգծված անդամները շարահյուսական հատուկ կապակցությունում են, որոնք մոր գրական հայերենում պիտի թարգմանվեն դիմավոր բայով արտահայտված ստորոգյալով և ուղղական հոլովով դրված ենթակայով մախադասությամբ։

Այդպես և համդիպում են մախադասություններ, որոնցում առկա է մեկ այլ տիպի կառուցվածք, այն է՝ ենթական դրված է լինում հայացական հոլովով, իսկ ստորոգյալը՝ անորոշ դերբայով. գրաբարում դա կոչվում էր հայացական հոլովը անորոշ դերբայի հետ (accusativus cum infinitivo) կապակցություն կամ կառուցվածք։ Օձնեցու սույմ երկում այդ տիպի կառուցվածքները, ի համեմատություն մախորդ տիպի կառուցվածքների, ավելի հաճախակի են գործածվում։ Օրինակ՝ «Ձոր դու և ոչ զմի գոջ յայդցանէ կարես առնուլ յաձն. յաղագս որոյ զնոյն ինքն ընքեան զմարդկային կազմածս մեղս անացեր գոյ» (էջ 87) – «Որ և դու դրամցից ոչ մեկը չես կարողանում քեզ վրա վերցնել. որի պատճառով ասացիր, թե մույն մարդկային կազմությունն ինքսիմ մեղք է»։ «Ջրմական լինելի մարմնի գպատահումն թուղացոյց» (էջ 89) – «Թողեց (թույլ տվեց), որ բնական կիրքը լինի մարմնում» և այլն։

Շարահյուսական կառուցվածքի առումով հետաքրքրական է մաև հունարան ոճի հետևողությամբ Օձնեցու գործածած մեկ այլ երևույթ։ Նկատի ունենք այն դեպքը, որ գրաբարում կոչվում էր վերացականը թամձրացականի փոխարեն (abstractum pro concreto), այսինքն՝ մախադասության գոյականական անդամի լրացումը ածականով դրվելու փոխարեն գործածվում է վերացական (– ութիւն ածանցմ ունեցող) գոյականով։ Գրաբարում դա բավական տարածված երևույթ էր (օրինակ՝ *բաժակ դառնութեան* – դառը բաժակ, *բազմույթիւն մետից-բազում*, *շատ մետեր* և այլն)։ Այս երևույթի մեջ հատկանշականն այն է, որ առարկայի կոնկրետ հատկամիջը վերացարկվում է իր անվանումային կոդով (հատկանշումը վերածվում է անվանման)։ Օձնեցու իմաստասիրական երկերում մեծապես երևույթի հանդես գալը պայմանավորված է մրա խոսքի վերացարկման, ընդհանրացման հանգամանքով։ Օրինակ՝ «Ջի թեւէտ և շատ ջամացար կուրաշաւիղ իմն արահետիւք ծածկել և թագուցանել գհաւաքեալ ի քեզ գդառնութեան մաղձ, այժմ յաստուածայնոյն բոճադատեալ յակնարկութենէ տեսչութեանն՝ ի վեր բխեցեր» (էջ 67) – «Որովհետև թեպետ և շատ ջամք թափեցիր ինչ-որ կուրաշաւիղ արահետով ծածկել և թաքցնել քո մեջ հավաքած դառը մաղձը, այժմ մախախմանության աստվածային հայացքից բոճադատվելով դեպի վեր ես հորդում»։ «Ջի և սուրբ հարքն՝ *բարեփառութեան* հիմնացեալ հաւատով, ամերկեան և ամտարակարծ խոհականութեամբ զԷճ անվթարելի զերկոսիմ գոսսա ընդ ինքեանս բարձեալ բերէիմ ըստ պիտոյիցմ իրակութեան» (էջ 70) – «Քանի որ մաև սուրբ Հայրերը, ուղղափառ հավատի վրա հենվելով, ամերկաբ և հավաստի իմացականությամբ այս երկուսն իրար հետ անվթար զենքի վերածելով դնում էին ըստ գործի պիտանիությամբ» և այլն։

Այս վերջին երևույթի հետ դույզմ-իմչ հարաբերակից է (թեև չի մույմանում) այն, որ բաղադրյալ ստորոգյալի ածականական մասը կարող է դրվել իբրև վերացական գոյական։ Օրինակ՝ «Եւ եթէ լոկ առամձիճմ քճմիցիճմ, կարիք կոչիմ. իսկ չափով և ժամանակի՝ *օգնականութիւն* են բնութեանս» (էջ 87) – «Եվ եթե

դրամը սուկ առանձին քննվեմ, կնոչվեմ պետքեր, իսկ չափի մեջ և ըստ ժամանակի՝ մեր բնությանը *օգնական եմ*»։ Ուրեմն բառային մակարդակում ևս Օձնեցիմ որոշակիորեն հետևում է հունարան հայերեմի սկզբունքների՝ կապված ոչ միայն բառերի ածանցմամ, այլև պատճենումային բառաբարդման հետ։ Այս երևույթը ժամանակիմ արգասավոր է եղել, ումեցել է հետևորդներ։ Եվ այդ ճանապարհով է ման հարստացել մեր լեզու, հատկապես նրա բառապաշարը։

ԼԻճԻ և այժմ խոսում էինք Օձնեցու «Ընդդէմ երևութականց»-ի մասին՝ շեշտը դնելով նրա իմացաբանական կողմն արտացոլող լեզվական չափամիջների վրա։ Դա հիմնականն է, էականը, որիմ սերտորեն առնչվում է ճարտասանական (այստեղ՝ քեմասացական) կողմը, որմ էլ իր արտացոլումն է գտնում մեծ իմաստասերի լեզվական ոճի մեջ։ Եվ այդ երկուսը սերտորեն ագուցված եմ միմանց, դրամը լրացնում եմ իրար և ստեղծում մեկ կուտ ամբողջություն։

«Ընդդէմ երևութականաց»-ի ճարտասանական կողմն անպայման պիտի հաշվի առնվի, երբ հարկ լիմի նրա մոր գրական հայերեմ թարգմանությունը։ Այն ումի երկու կարևոր դրսևորում։ Առաջինը վերաբերում է հարցերի քննարկման մեջ հակառակորդի կողմնորոշման սխալակամության բացահայտման ու բացառման պարագայում ի գործ դրվող լեզվական և ոճական միջոցներին ու հնարներին։ Իսկ մյուսը պայմանավորված է հեղինակային խոսքի այլ կարգի յուրահատկությունններով։

Դիմելով իր ընդդիմախոսներին՝ Օձնեցիմ գործածում է բառեր և արտահայտություններ, տալիս ձևակերպումներ, որոնք դիպուկ եմ, պատկերավոր, և դրանցում առկա է ամհականականությունը, խորությունը։ Գործածվում եմ բնութագրող բառեր ու բառակապակցություններ, որոնք ըստ էության իմաստասերի ոճն եմ ցույց տալիս. օրինակ՝ *խանձարրապատիմ* («խանձարրորով պատվել»), *այսինքն՝ «անհաս իմացություն ունեմալ»*, *կաթնարոյն լինել* («կաթնակեր լինել»), *աղանդողիմ* («մոլորվել, տատանվել»), *անպատկառացոյց* («ամպատկառություն ցուցաբերող»), *չարափառ* («մոլորյալ, աղանդավոր»), *դժոխաբանել* («դժոխային խոսք ասել, հայհոյել»), *որոմնացան* («չարի սերմ ցանող»), *գայթ հ գայթ* («ամհաստատ, խախտատ») և այլն։

Հեղինակային խոսքի այլ կարգի յուրահատկությունն եմ «Ընդդէմ երևութականաց»-ում համեմատությունների, փոխաբերությունների, թեևվոր խոսքի օգտագործումը։ Օրինակ «Ըստ նմիմ և դուք երկուցեայք լերկուցն ասել բնութեանց՝ ի Պանդորոսին փախուցեալ անկանիք լիմարություն» (էջ 63) – «Նույն ձևով և դուք երկու բնությունից ասելուց վախեցածներդ Պանդորոսի մոտ փախելով ընկնում եք հիմարության մեջ»։ «Մի գմիմ ասելով՝ զբնութեանցն խցանել կամակործացուք զաղբերս, և մի յասելոյ անտի գերկախումքմ՝ պատառել կամելով զմիաորութեանն պատմունան» (էջ 65) – «Ոչ կամակոր լինեց՝ մեկն ասելով, խցանելու բնությունների աղբյուրները, ոչ էլ՝ այն երկուսը միասին ասելիս, կամեմալով պատռել միավորության պատմունանը»։ «Եւ գայդ այդպէս դադակատելովդ՝ Արիոսի եղեալ գտանիս չարապաշտութեանն զուգամայն» (էջ 69) – «Եվ դու դա այդպես պատակտելով՝ Արիոսի չարապաշտությանը ձայնակից կլինես»։ «Արդ զի՝արդ դու մոլորեցար՝ կամ ոչ իսկ ասել դէմ և առանձնաւորութիմ երեքամձնական զօրութեանն, և կամ ասել՝ չարայար ասել ընդ Լիբեացոյնն ելանել սուր. փոխանակ երից դիմաց և առանձնաւորութեան՝ մի ասել դէմ և առանձնաւորութիմ» (էջ 79) – «Արդ, դու ինչու՞ մոլորության մեջ ըմկար՝ թե երեքամձնայ այն զորությունը չճանաչելով անձ և ինքնություն, թե ճանաչելով՝ շատ վատ ճանաչեցիր, լիբիացի դուրս քաջած սրի հետ, երեք անձ և ինքնության

փոխարեն մեկ անձ և ինքնությունն ճանաչել» և այլն: Նման երևույթները շատ են և պահանջում են մանրակրկիտ մոտեցում և ըստ այդմ թարգմանություն:

Հովհաննես Օձնեցու «Ընդդեմ երևութականաց»-ը և առհասարակ մյուս երկերը մեր ոչ այնքան վաղ անցյալի արտացոլումն են թե՛ իմացականության և թե՛ լեզվի առումով: Այսօր դրանք ըստ ամենայնի հարազատ են, արդիական, ուստի մեր մտավոր զարգացման համար ունեն որոշակի կարևորություն:

Ժամանակը գնում է առաջ, ժամանակն իր հետ բերում է իր գտածն ու ընտրածը: Ժամանակը մեզ ցույց է տալիս իր բերածը և տրամադրում այն իմանալու, որպեսզի մեզանից վերցնի և իր մեջ առանձնացնի անենակարևորն ու պիտանին: Հովհաննես Օձնեցու հանձնածը ժամանակին եկել և հասել է մեզ, ուրեմն մեր օրերի ըմբռնումով հարկ կա հասկանալու այդ բերածը, ըստ այդմ նաև հարստացնելու ժամանակին հանձնելիքը: Նոր գրական հայերեն թարգմանել Օձնեցու երկերը, որպեսզի ավելի խորն ըմբռնենք դրանք, որպեսզի ավելի լավ հասկանանք մեր հոգևոր անելիքը, ժամանակին հանձնելիքը:

Մեր հավատքը՝ մեզ իմացական սյուն, մեր սուրբ Հայրերի արածը՝ սյուն պահող ուժ: